

ԻՄ ՍԵՐԸ ՔԵՉ, ԵՐԵՎԱՆ

Յուրաքանչյուր չեխովական գիտի, որ ինքը հարագատ օջախում բազում ավանդույթների շարունակողներից մեկն է, և ինքն էլ մի քար պիտի դնի շարված պատին, որ ամուր պատը բարձրանա:

2010թ. մայիսի 24-ին տեղի ունեցավ հին ու նոր Երևանին նվիրված ցերեկույթ՝ աշակերտների՝ Երևանին նվիրված շարադրություններից ընտրված հատվածներով: Դրանք աշակերտների սիրո ու հիացմունքի խոսքեր էին՝ ուղղված ծննդավայր ու քաղաքամայր Երևանին: Ցուցապաստառները ունկնդիրներին տանում էին Հռոմից էլ հին քաղաքի՝ Երևանի պատմության խորքերը, իսկ մեծերին՝ հուշերի գիրկը:

Երևա՛ն, իմ քարի՛ քաղաք, դու բոլոր հայերի, աշխարհասփյուռ հայերի սիրտն ես:

Սրտի խորքից բխած խոսքերից կազմված փոքրիկ միջոցառումը նվիրում ենք քեզ, որովհետև քո ուրախության ու տխրության մի մասն ենք մենք:

<<Իմ սերը քեզ, Երևա՛ն>> միջոցառման կազմակերպիչներ և մասնակիցներ:

